ԲՅՈՒԼԵՏԵՆ

Ապրիլ 2026թ.

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

Ապրիլին գումարվել է Պալատի խորհրդի 2 նիստ՝ **07.04.2026թ.**-ին և **27.04.2026թ.**-ին:

07.04.2026թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 4 հարց: Նիստի ընթացքում հաստատվեցին Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, Պալատի ֆիզիկական անձ անդամների անդամակցությունը դադարեցնելու, Պալատին անդամակցելու համար դիմած կազմակերպությանը Պալատի անդամ ընդունելու մասին որոշումները:

27.04.2026թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 8 հարց: Նիստի ընթացքում ներկայացվեցին Պալատի խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման դիմումը և Խորհրդի նոր կազմը, հաստատվեցին Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, Պալատի խորհրդի 30.08.22թ. N22-Լ որոշման փոփոխությունը հաստատելու, Պալատի ՈՊՊԿ հանձնաժողովի 2025թ. տարեկան գործունեության հաշվետվությունը, ինչպես նաև Պալատի գործադիր տնօրենի տարեկան գործունեության հաշվետվությունը հաստատելու, Պալատի հերթական ընդհանուր ժողով հրավիրելու, Պալատի անդամ աուդիտորական կազմակերպության նկատմամբ ԿՊՄ կիրառելու մասին որոշումները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

Որակավորման հանձնաժողով

Որակավորման հանձնաժողովը գումարել է 2 նիստ՝ **03.04.2026թ.**-ին և **22.04.2026թ.**-ին, որոնցում աուդիտորի որակավորում է շնորհվել 4, փորձագետ հաշվապահի որակավորում՝ 16 անձի և հավանություն է տրվել որոշակի դասընթացներ ՇՄԶ ճանաչելուն:

Անդամակցության հանձնաժողով

Հանձնաժողովը գումարել է 2 նիստ՝ **04.04.2026թ.**-ին և **06.04.2026թ.**-ին , որոնցում որոշել է առաջարկել Պալատի խորհրդին՝ հաստատելու 3 ֆիզիկական անձանց և 1 աուդիտորական կազմակերպության (Էյչ Էմ Աուդիտ ՍՊԸ) անդամակցությունը Պալատին:

ՈՐԱԿԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՒ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հանձնաժողովը գումարել է 1 նիստ՝ **22.04.2026թ.**-ին, որում քննարկել է «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ–ի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելու հարցը:

ՇՄԶ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

13.04.2026թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ- «Շահութահարկ, հարց և պատասխան» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Լեռնիկ Հարությունյանը:**



15.04.2026թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«Քվանտային տեխնոլոգիաներ և ֆինանսական/աուդիտորական գործառույթների անվտանգությունը» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ֆլորա Գրիգորյանը:**



17.04.2026թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«Աուդիտորական ընթացակարգերի կիրառումը» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Էմիլ Վասիլյանը:**



120.04.2026թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«Աշխատանքային օրենսգրքի ամենակիրառելի կարգավորումները, հարց և պատասխան» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ժորա Սարգսյանը:**



ՀԱԵԽ նիստ

2026թ. ապրիլի 14-ին տեղի ունեցավ Հաշվապահների և աուդիտորների եվրասիական խմբի (ՀԱԵԽ) հերթական նիստը: Նիստը նախագահում էր Պալատի խորհդի անդամ, ՀԱԵԽ նախագահ **Թաթուլ Մովսիսյանը**: Նիստի ընթացքում հաստատվեցին ՀԱԵԽ Կրթության և Մասնագիտական էթիկայի հանձնաժողովների 2025թ. գործունեության հաշվետվությունները և 2026թ. գործունեության տարեկան ծրագրերը, Մասնագիտական էթիկայի և Թվային տնտեսության պայմաններում հաշվապահական հաշվառման և աուդիտի վերափոխման հանձնաժողովի անհատական կազմերի փոփոխության վերաբերյալ որոշումները:

ՀԱԵԽ-ի ընդհանուր ժողովին մասնակցում էր նաև Պալատի գործադիր տնօրեն **Հայկ Մնացականյանը**:



ԵԱՏՄ աուդիտորների Խորհրդատվական մարմնի նախագահության նիստ

2026թ. ապրիլի 29-ին տեղի ունեցավ Եվրասիական տնտեսական միության աուդիտորների Խորհրդատվական մարմնի նախագահության նիստը: Օրակարգում կառույցի որոշ հանձնաժողովների կազմերի փոփոխությանը, ԵԱՏՄ միասնական աուդիտորական շուկայի պայմաններում աշխատելու, աուդիտորական կազմակերպությունների հետաքրքրությունն ու պատրաստակամությունը գնահատելու նպատակով աուդիտորական կազմակերպությունների շրջանում հարցում անցկացնելու, Աուդիտորական գործունեության ստանդարտացմանը և մասնագիտական էթիկայի հանձնաժողովի 2026թ. աշխատանքային ծրագրի քննարկմանը վերաբերող հարցերն էին:
Նիստին մասնակցում էին Պալատի խորհրդի անդամ **Թաթուլ Մովսիսյանը** և Պալատի գործադիր տնօրե**ն Հայկ Մնացականյանը:**